

---

---

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՈՃԻ ՇԱՐՎԱՅՈՒՄԱԿԱՆ ՈՐՈՇ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՋ**

**Ա. Է. ՀԱԿՈՒՅԱՆ**

Պաշտոնական կամ վարչագործարարական ոճին ընդհանուր առմամբ հատուկ են շարադրանքի տրամաբանական հետևողականությունը, ճշտությունը, ճշգրտությունը և արտահայտության միասնականությունը: Պաշտոնական ոճի շարադրանքի մեջ յուրաքանչյուր հասկացություն մեկնիմաստ է և միանշանակ: Յուրաքանչյուր բառ այստեղ գործածվում է իր անվանողական նշանակությամբ և առարկայական ուղղակի իմաստով, ուր բացառվում են բառերի փոխաբերական, հուզաարտահայտչական իմաստները<sup>1</sup>: Պաշտոնական ոճով շարադրված նյութերն ունեն լեզվաոճական ընդհանուր համակարգ, որը բնութագրվում է մի շարք ոճակազմիչ հատկանիշներով: Ընդ որում, իրավական յուրաքանչյուր ոլորտ ունի գործավարության իր յուրահատուկ համակարգը, ըստ որի առանձնացվում են պաշտոնական ոճի հատկապես ենթաոճերը՝ *օրենսդրական, դիվանագիտական, գրասենյակային և դատաքննչական*<sup>2</sup>:

Ցանկացած իրավական պետության կարևորագույն խնդիրը երկրում օրենքի գերակայության գործառույթի իրականացումն է, օրինականության հաստատումն ու ամրապնդումը: Հաշվի առնելով օրինականության սկզբունքի կարևորությունը՝ յուրաքանչյուր պետություն իր սահմանադրության մեջ ամրագրում է հիմնարար դրույթներ և դրանց վերաբերյալ պարզաբանումներ տալիս: Իրավունքի գերակայությունը պաշտպանող երկրներում այս հիմնարար արժեքներին հավատարիմ լինելն արտահայտվում է անհատի և պետության փոխհարաբերությունները կարգավորող ամբողջական սահմանադրական կառույցով: Հետևաբար մարդու սահմանադրական իրավունքները, հիմնարար ազատությունները և պարտականությունները կարգավորում են անձի և պետության միջև գոյություն ունեցող հարաբերությունները և կոչված են ոչ միայն մարդու սահմանադրական իրավունքները պաշտպանելուն, այլ նաև խախտված իրավունքները վերականգնելուն: Ինչպես հայտնի է, մարդու իրավունքներն ու ազատություններն ամենից առաջ սահմանված են միջազգային-իրավական ակտերով, որոնց նորմերը, որպես կանոն, իրենց արտացոլումն են ստանում պետությունների սահմանադրության մեջ<sup>3</sup>: Ամերիկայի Միացյալ Նահանգների սահմանադրությունը, լինելով աշխարհի ամենահակիրճ և սեղմ սահմանադրություններից մեկը, համապարփակ կերպով արտահայտում է պետական

---

<sup>1</sup> Տե՛ս **В. Калюжная**, *Стиль англоязычных документов международных организаций*, Киев, 1982, էջ 4, **R. Hiltunen**, *Chapters on Legal English, Aspects Past and Present of the Language of the Law*, Helsinki, 1990, էջ 65, **Լ. Եգեկյան**, *Ոճագիտություն*, Եր., 2003, էջ 44:

<sup>2</sup> Տե՛ս **Գ. Ջահուկյան, Ֆ. Խլղաթյան**, *Հայոց լեզվի ոճաբանություն*, Եր., 2007, էջ 67:

<sup>3</sup> Տե՛ս **Ռ. Հակոբյան**, *Սահմանադրական իրավախախտման հասկացությունը և հատկանիշները*, «Օրենք և իրականություն», միջազգային իրավաբանական գիտական հանդես, 9/131, սեպտեմբեր, 2006, էջ 2-5:

և հասարակական բոլոր կարևորագույն նորմերը, այնպես որ գոյության շուրջ երկուսուկես դարի գործածության ընթացքում այն գրեթե փոփոխությունների չի ենթարկվել: Այդ առումով ամերիկյան սահմանադրությունը համարվում է աշխարհի ամենակայուն ու անփոփոխ սահմանադրություններից մեկը, որի օրինակով կազմվել են նաև շատ երկրների սահմանադրություններ: Այս առանձնահատկություններն են պատճառը, որ մենք սույն հոդվածում փորձել ենք դիտարկել սահմանադրության տեքստի կառուցվածքային մի շարք առանձնահատկություններ: Քանի որ, ինչպես ստորև կտեսնենք, սահմանադրության տեքստի կառուցվածքային առանձնահատկությունները ևս մեծ հետաքրքրություն են ներկայացնում և բխում են պաշտոնական ոճի ընդհանուր պահանջներից:

Բավական երկար ժամանակ նախադասությունը համարվել է լեզվի բարձրագույն մակարդակի ամենամեծ միավորը: Սակայն XX դարի 60-ական թվականներին ձևավորվեց մի նոր գիտակարգ՝ տեքստի լեզվաբանությունը, որի դեպքում հետազոտողները ելնում էին հետևյալ հիմնադրություններից.

ա) լեզվական բարձրագույն մակարդակի ամենամեծ միավորը ոչ թե նախադասությունն է, այլ տեքստը, որը ևս ուսումնասիրվում է շարահյուսության կողմից,

բ) տեքստը չի կարելի նույնացնել խոսքի հետ: Ինչպես նախադասությունը չի կարելի համարել միայն խոսքային միավոր, այլ պետք է դիտել որպես լեզվի համակարգի բաղադրիչ, նրա մասնակի դրսևորում, այնպես էլ տեքստը ներկայացնում է լեզվական միավոր, որի ընդհանուր կառուցվածքային առանձնահատկություններն ուսումնասիրվում են լեզվաբանության կողմից, և որը կոնկրետանում, դրսևորվում է առանձին տեքստերի ձևով<sup>4</sup>: Տեքստային մակարդակի նվազագույն միավորը տարբեր լեզվաբաններ տարբեր կերպ են անվանել, ինչպես՝ պարբերությ (Վ. Առաքելյան, Լ. Եզեկյան), գերասության միասնություն (Ի. Գալպերին) և այլն<sup>5</sup>: Մի շարք լեզվաբաններ գտնում են, որ պարբերությը և գերասության միասնությունը լեզվական միևնույն իրողությունն են ցույց տալիս, սակայն առաջինը գրավոր խոսքի դրսևորում է, մինչդեռ վերջինը՝ բանավոր<sup>6</sup>: Պարբերությ հասկացության հետ սերտորեն կապված է պարբերություն հասկացությունը: Ընդ որում, պարբերության ավելի բարդ շարահյուսական ամբողջություն է, քան պարբերությունը, որքանով տվյալ պարբերությը՝ գերասության միասնությունը, կարող է բաղկացած լինել մեկից ավելի պարբերություններից: Այդ պարբերությունները կամ պարբերության բաղադրիչ անդամները միմյանց կապակցվում են լեզվական տարբեր միջոցներով, որոնց համալիր ամբողջությամբ էլ ձևավորվում է պարբերությը:

Պաշտոնական ոճում գործածվող պարբերությունների առանձնահատկությունները պայմանավորված են և բխում են տվյալ ժանրի լեզվաոճական այնպիսի հատկանիշներից, ինչպիսիք են մտքի հստակությունն ու ասելիքն ընդգծելու միտումը:

Այժմ փորձենք դիտարկել պաշտոնական ոճի ուրույն դրսևորումներից մեկի՝ պարբերությունների կառուցվածքային որոշ առանձնահատկություններ՝ ըստ Ամերիկայի սահմանադրության տեքստի օրինակների: Սահմանադրության ամեն մի հոդված հանդես է գալիս որպես մեկ ամբողջական պարբերությ: Ընդ որում, ուշագրավ է, որ այնտեղ հանդիպում են ինչպես մեկից ավելի նախադասություններից

<sup>4</sup> Տե՛ս **Գ. Ջահուկյան**, Շարահյուսական ուսումնասիրություններ, Եր., 2003, էջ 60:

<sup>5</sup> Տե՛ս **Վ. Առաքելյան**, Հայերենի պարբերությը, Եր., 1968, էջ 39, **Լ. Եզեկյան**, Հայոց լեզու, Եր., 2007, էջ 373, **I. Galperin**, Stylistics, M., 1977, էջ 194:

<sup>6</sup> Տե՛ս «Optimization of the Linguistic Message», edited by O. Akhmanova, T. Perekalskaja, M., 1974, էջ 19:

ու պարբերություններից բաղկացած, այնպես էլ մեկ նախադասությամբ պարբերություններ, ինչպես օրինակ՝

*The enumeration in the Constitution of certain rights shall not be construed to deny or disparage others retained by the people.*

*The powers not delegated to the United States by the Constitution, nor prohibited by it to the States, are reserved to the States respectively, or to the people.*

(Constitution of the United States, Amendment X, p. 23)

Նմանատիպ նախադասությունները բովանդակային առումով արտահայտում են ավարտուն միտք և հանդես են գալիս որպես մեկ ամբողջական պարբերությո՛ւթ: Ընդ որում, այդ կարգի նախադասությունները սահմանադրության տեքստում ունեն կառուցվածքային ռճական ծանրաբեռնվածություն: Նրանք հակիրճ և ամփոփ կերպով առանձնացնում և ամրագրում են տվյալ կետում արտահայտված միտքը: Մինչդեռ այն պարբերություններում, որոնք բաղկացած են մեկից ավելի նախադասություններից ու պարբերություններից, ընդհանուր առմամբ ամեն մի հաջորդող պարբերություն մանրամասնում, պարզաբանում և լրացնում է նախորդ պարբերությունում հակիրճ, ընդհանուր կերպով արտահայտված միտքը, ինչպես օրինակ՝

*Section 1. The terms of the President and Vice President shall end at noon on the 20<sup>th</sup> day of January, and the terms of Senators and Representatives at noon on the 3d day of January, of the years in which such terms would have ended if this article had not been ratified; and the terms of their successors shall then begin.*

*Section 2. The Congress shall assemble at least once in every year, and such meeting shall begin at noon on the 3d day of January, unless they shall by law appoint a different day.*

*Section 3. If, at the time fixed for the beginning of the term of the President, the President elect shall have died, the Vice President elect shall become President...*

*Section 4. The Congress may by law provide for the case of the death of any of the persons from whom the House of Representatives may choose a President ...*

(Constitution of the United States, Amendment XX, p. 29)

Հետազոտվող ժանրի փաստաթղթերում նկատվում են երկու հակադիր միտումներ, որոնք մեծ ազդեցություն են գործում սահմանադրության տեքստի շարահյուսական կառուցվածքի վրա: Դրանցից առաջինը հակիրճության, սեղմության ձգտումն է, որի դեպքում մեկ նախադասության մեջ խտացված արտահայտվում է հնարավորինս շատ տեղեկատվություն, և որը մեկ ամբողջական ավարտուն միտք է ներկայացնում: Իսկ երկրորդ միտումը շարադրանքի պարզության և հստակության ձգտումն է, որը քննարկվող ռճի կարևորագույն առանձնահատկություններից է, և որն անհրաժեշտ դեպքերում պահանջում է մանրամասն շարադրանք և հանգեցնում է մեկից ավելի պարբերություններից բաղկացած պարբերությունների առաջացմանը: Հարկ է նշել, որ մեկից ավելի պարբերություններից բաղկացած պարբերությունները կարող են լինել չափակից և անչափակից: Չափակից պարբերությունների բաղադրիչ մասերը՝ պարբերությունները, բնութագրվում են հարակրկնության կիրառմամբ, շարահյուսական միավորների գուգահեռ ու համապատասխան դասավորվածությամբ, մինչդեռ անչափակից պարբերությունների դեպքում բաղադրիչ մասերի այդպիսի ստույգ և խիստ չափակցություններ չեն լինում: Չափակից պարբերությունին բնորոշ հատկանիշներից հատկապես ուշագրավ է հարակրկնությունը, որը ոչ միայն նպաստում է շարահյուսական միավորների համաչափ և ներդաշնակ շարադասությանը, այլ նաև ընդգծում է արտահայտվող միտքը՝ ընթերցողի ուշադրությունը կենտրոնացնելով հաղորդվող նյութի վրա: Օրինակ՝

*Section 5. Each House shall be the Judge of the Elections, Returns and Qualifications of its own Members, and a Majority of each shall constitute a Quorum to do business; but a smaller Number may adjourn from day to day, and may be authorized to compel the Attendance of absent Members, in such Manner, and under such Penalties as each House may provide.*

*Each house may determine the Rules of its Proceedings, punish its members for disorderly Behaviour, and, with the Concurrence of two thirds, expel a Member.*

*Each House shall keep a Journal of its proceedings, and from time to time publish the same, excepting such Parts as may in their Judgment require Secrecy; and the Yeas and Nays of the members of either House on any question shall, at the Desire of one fifth of those Present, be entered on the Journal.*

( Constitution of the United States, Article. I, p. 4)

Բերված օրինակում պարբերության երեք բաղադրիչ մասերը սկսվում են քերականական նույնաբան բառերով, որոնք, տվյալ դեպքում հանդես գալով ենթակայի պաշտոնով, հարակրկնված են և շարադասված ճիշտ համապատասխան տեղերում: Այսպիսի ներդաշնակ և չափակից շարադասությունը հանգեցնում է կանոնավոր կշռության<sup>7</sup>: Նմանատիպ բառերը կոչվում են շարահյուսական բառեր, քանի որ բացի այն, որ նրանք տվյալ պարբերությամբ կազմող բառագիտական և տեղեկատվական ծանրաբեռնվածություն ունեցող լեզվական միավորներ են, միաժամանակ նպաստում են նաև շարահյուսական յուրօրինակ կառույցների ձևավորմանը: Այդ առումով պատահական չէ, որ մեկ պարբերության ներսում միմյանց հետ փոխկապակցված պարբերություններից առաջինում ենթակայի և խնդրի պաշտոնով կիրառված գոյականները հաջորդող պարբերությունների մեջ ընդհանուր առմամբ չեն փոխարինվում համապատասխան անձնական դերանուններով, այլ տվյալ գոյականը կրկնվում է հաջորդող պարբերությունների մեջ՝ անշուշտ, մի կողմից ասելիքն առավել ընդգծելու և ուշադրություն գրավելու և մյուս կողմից՝ միտքը հնարավորինս հստակ արտահայտելու և երկիմաստությունից խուսափելու նպատակով: Ընդ որում, ինչպես վերը տեսանք, այդ միտումներն էլ իրենց հերթին հանգեցնում են հարակրկնությունների առաջացմանը: Այնուամենայնիվ պետք է նշել, որ, չնայած շարադասանքի հստակության և ասելիքն ընդգծելու ձգտմանը, փաստաթղթերի մեջ հնարավոր չէ լիովին խուսափել փոխանորդ բառերի կիրառությունից, քանի որ հակառակ դեպքում տեքստում չափից առավել հարակրկնությունները կհանգեցնեին տաղտկալի կրկնաբանության: Ուստի սահմանադրության տեքստում մի կողմից ասելիքն ընդգծելու և մյուս կողմից կրկնաբանությունից խուսափելու երկու հակադիր միտումները մի տեսակ կարծես հավասարակշռվում ու չափավորվում են համապատասխանաբար հարակրկնությունների և փոխանորդ բառերի կիրառությամբ, ինչի վառ օրինակ կարող է լինել մեջբերվող հետևյալ տեքստահատվածը.

*Section 2. The President shall be Commander in Chief of the Army and navy of the United States, and of the Militia of the several States, when called into the actual Service of the United States; he may require the Opinion, in writing, of the principal Officer in each of the executive Departments, upon any Subject relating to the Duties of their respective Offices, and he shall have Power to grant Reprieves and Pardons for Offenses against the United States, except in Cases of Impeachment.*

*He shall have Power, by and with the Advice and Consent of the Senate, to make Treaties, provided two thirds of the Senators present concur; and he shall nominate, and*

<sup>7</sup> Տե՛ս Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 53:

by and with the Advice and Consent of the Senate, shall appoint Ambassadors, other public Ministers and Consuls, Judges of the Supreme Court, and all other Officers of the United States, whose Appointments are not herein otherwise provided for, and which shall be established by Law: But the Congress may by Law vest the Appointment of such inferior Officers, as they think proper, in the President alone, in the Courts of Law, or in the Heads of Departments.

**The President** shall have Power to fill up all Vacancies that may happen during the Recess of the Senate, by granting Commissions which shall expire at the End of their next Session.

Section 3. **He** shall from time to time give to the Congress Information of the State of the Union, and recommend to their Consideration such Measures as **he** shall judge necessary and expedient; **he** may, on extraordinary Occasions, convene both Houses, or either of them, and in Case of Disagreement between them, with Respect to the Time of Adjournment, **he** may adjourn them to such Time as **he** shall think proper; **he** shall receive Ambassadors and other public Ministers; **he** shall take Care that the Laws be faithfully executed and shall Commission all the Offices of the United States.

Section 4. **The President**, Vice President and all civil Officers of the United States, shall be removed from Office in Impeachment for, and Conviction of, Treason, Bribery, or other high Crimes and Misdemeanors.

(Constitution of the United States, Article II, p.11)

Ինչպես տեսնում ենք, վերոհիշյալ հատվածում ենթակայի պաշտոնով հանդես եկող *the President* գոյականը պարբերաբար փոխարինվում է *He* անձնական դերանունով: Մինչդեռ հսկառակ դեպքում մեկ պարբերության մեջ *the President* բառի 14 անգամ կրկնվելն անշուշտ տաղտկալի կրկնաբանության կհանգեցներ: Մյուս կողմից, կարծում ենք, վերոհիշյալ հատվածում ենթակայի հարակրկնության ոչ լիակատարությունը որոշակիորեն փոխհավասարակշռվում է *Shall* և *May* եղանակավորող բայերով կազմված շարահյուսական զուգահեռ կառույցների առկայությամբ, որոնք էլ, իրենց հերթին հարակրկնություն ստեղծելով, նպաստում են ասելիքն ընդգծելու և երկիմաստությունից խուսափելու միտումներին:

Այսպիսով, ամփոփելով կարող ենք ասել, որ ամերիկյան սահմանադրության տեքստում պարբերությունների կառուցվածքային առաձևահատկությունները մեծապես պայմանավորված են պաշտոնական ոճին բնորոշ երկու հիմնական միտումներով՝ մի կողմից ասելիքը հնարավորինս ընդգծելու և ընթերցողի ուշադրությունը գրավելու և մյուս կողմից՝ շարադրանքի հստակության ու երկիմաստությունից խուսափելու պահանջով: Ու թեև այդ հարցում չափազանց մեծ է հարակրկնության դերը, սակայն վերջինիս կիրառությունն անհրաժեշտության դեպքում սահմանափակվում ու փոխհավասարակշռվում է փոխանորդ բառերի գործածությամբ:

**А. Э. АКОПЯН — О некоторых синтаксических особенностях официально-делового стиля.** — В статье делается попытка показать, какую важную роль играет анафора в образовании параграфов в текстах официально-делового стиля: она подчеркивает выражаемую мысль и сосредоточивает на ней внимание читателя. С другой стороны, интересно, что анафора иногда, по необходимости, ограничивается употреблением заменительных слов, дабы текст не превратился в скучную тавтологию.